Ս.ՇՏԻԿՅԱՆ

ԲԱՅՐՈՆԸ ԵՎ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի պետական հրատարակչությունը վերջերս սկսել է իրականացնել դրվատանքի արժանի մի մտահղացում՝ լույս ընծայել գիտահանրամատչելի աշխատություններ եվրոպական գրականության այն խոշորագույն ներկայացուցիչների մասին, ովքեր զբաղվել են հայ ժողովրդի, նրա գրականության, նրա դարավոր մշակույթի ու պատմության հետազոտությամբ։ Դաշտենցի «Բայրոնը և հայերը» ոչ ծավալուն ուսումնասիրությունը, որը հրատարակվել է Երևանում 1959 թ., և որի համար, ի դեպ, հեղինակին շնորհվել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը, վերոհիշյալ խրախուսելի մտահղացման եթե ոչ առաջին, գոնե առաջիններից մեկը հանդիսացող փորձն է, և որպես այդպիսին հասկանալի է դառնում այն ջերմ ուշադրությունն ու համակրանքը, որին արժանացավ նա հայ ընթերցող ու գիտական հասարակայնության կողմից։ Հանրահայտ է, որ 17-րդ դարի վերջին քառորդից սկսած՝ եվրոպասի գիտնականներն ու գրողները ավելի ու ավելի ուշադրությամբ են սկսում զբաղվել հայ գրականությամբ ու հայ ժողովրդի պատմությամբ, որոնց մասին նրանք տվել են զգալի թվով մինչև այսօր էլ մեծ արժեք ներկայացնող գործեր, որոնք շարունակում են սփռված մնալ հայ և օտարազգի պարբերականների էջերում։ Մնում է միայն ցանկանալ, որ Խաչիկ Դաշտենցի աշխատությունը եզակի չմնա իր տեսակի մեջ, որ հայ և եվրոպական գրական կապերի քննությամբ զբաղվող մեր գիտնականները զբաղվեն այնպիսի գրողներով, ինչպիսիք են ասենք, Ալֆոնս Դոդեն, Էմիլ Զոլան, Հերման Զուդերմանը, Անատոլ Ֆրանսը, Էմիլ Վերհարնը և շատ ուրիշներ, հայագետ գիտնականներից էլ՝ Հյուբշմանի, Հումբոլդտի, Բաումգատենի, Պիշարի, Լա-Կրոզի, Սեն-Մարտենի, Կարրիերի և ուրիշների մասին վերոհիշյալ բնույթն ունեցող շահեկան ուսումնասիրություններ գրելով։

Առաջինը, որ հենց սկզբից աչքի է ընկնում Դաշտենցի «Բայրոնը և հայերը» աշխատությունը կարդալիս, փաստերի առատությունն է։ Հանրահայտ է, օրինակ, որ Բայրոնը հայ գրականությունն ու լեզուն ուսումնասիրելու համար, Վենետիկի Մխիթարյանների մոտ մնացել է ընդամենը մի քանի ամիս (1816թ. դեկտեմբերի 1 – 1817թ. մարտի 3) և այն էլ՝ շաբաթվա մեջ մի քանի օր, օրվա ընթացքում էլ՝ ընդհանուր առմամբ երեք-չորս ժամ այցելելով կղզին։ Մեծ անգլիացու այս ուսումնառության մասին առաջին անգամ խոսեցին հենց իրենք՝ Մխիթարյանները, հետագայում տարբեր առիթներով հրատարակվեցին մի քանի ուշագրավ փաստեր ևս, տպագրեցին Բայրոնի ուսուցչի՝ Մխիթարյան միաբանության անդամ, հայագետ,

բանասեր Հարություն Ավգերյանի օրագրից մի հատված, որտեղ նա նկարագրում էր իր սանի վարքուբարքը, ընդունակությունը, այդ ամենը, վերջապես, քիչ ավելի ամբողջացված ներկայացվեց 1934 թվականի «Բազմավեպում», որը նվիրված է Բայրոնի մահվան 110-ամյակին և այլն։ Այսքանը, կամ մոտավորապես այսքանն էր հայտնի առ այսօր և թվում էր, թե գրախոսվող գրքի հեղինակը այդ կապակցությամբ ուրիշ նյութեր և առանձնապես հետաքրքրական փաստեր չպիտի ունենար հաղորդելու հայ ընթերցողին։ Սակայն իրականում այդպես չէ։ Ի մի բերելով այն ամենն ինչ ասված է եղել հայ պարբերականներում Բայրոնի՝ Մխիթարյանների մոտ ուսումնառության վերաբերյալ, աչքաթող չանելով անգամ հարևանցիորեն ասված այս կամ այն փոքրիկ նախադասությունները, Դաշտենցը կարողացել է բավականին տեղեկություններ հավաքել։ Գործը, այս տեսակետից, դժվարանում է մանավանդ այն պատճառով, որ վերոհիշյալ հարցի վերաբերյալ չկա ոչ մի բիբլիոգրաֆիա, ոչ մի ուղեցույց ձեռնարկ, և Բայրոնի մասին տեղեկություններ գտնելու համար գրախոսվող աշխատության հեղինակին մնում էր սոսկ մեկ առ մեկ թերթել տվյալ ժամանակաշրջանի մեր պարբերականները, մի աշխատանք, որը, հասկանալի է, հեշտերից լինել չէր կարող։

«Բայրոնը և հայերը» ուսումնասիրությունն ավելի փաստալից, և հետևաբար, ավելի արժեքավոր է դարձել նաև այն պատճառով, որ հեղինակը լայնորեն օգտագործել է օտարազգի, հիմնականում անգլիական ու ֆրանսիական բանասերների աշխատությունները, այսպիսով, հնարավորինս լրացնելով ու ընդարձակելով այն ամենը, ինչ անգլիացի մեծ գրողի մասին հաղորդում էին հայկական աղբյուրները։ Հիանալի տիրապետելով անգլերենին (հիշենք, որ Շեքսպիրի ստեղծագործությունների հայերեն թարգմանությունների զգալի մասը, տարիների ջանադիր աշխատանքով, կատարել է Դաշտենցը), վկայակոչելով եվրոպական բանասիրության այնպիսի ճանաչված հեղինակությունների, ինչպիսիք են Մագեյը, Մըրենը, Մուրը, Գուրզոնը, Մեդվինը և էլի ուրիշները, նրանց բազմաթիվ աշխատություններում եղած տվյալները շարահյուսելով մեր պարբերականներում եղածների հետ, Դաշտենցը կարողացել է հայ ընթերցողների սեղանին դնել ուշագրավ մի աշխատություն անգլիացի հանճարեղ գրող Բայրոնի՝ հայերի, Հայաստանի և հայ ժողովրդի դարավոր մշակույթի հետ նրա ունեցած կապերի մասին։ Այսպիսի մոտեցման հետևանքով հեղինակը անհամեմատ լայնացնում ու խորացնում է մեր գիտելիքները, օրինակ, Բայրոնի՝ Մխիթարյանների մոտ եղած ժամանակաշրջանի մասին, որի վերաբերյալ, ինչպես արդեն ասացինք, հայագիտությանը հայտնի էր հիմնականում այնքանը միայն, ինչ նպատակահարմար են գտել հրապարակել «Սուրբ Ղազարի հայրերը»։ Այժմ պարզ է դառնում այն հասարակական պատճառը, որի թելադրանքով անգլիացի դասականը սկսեց

հետաքրքրվել հատկապես հայերեն լեզվով ու մշակույթով, ինչու նա «հենց այնպես» հետաքրքրվելուց բացի, ձեռնամուխ եղավ «այդ բարդ լեզուն» սովորելու աշխատանքներին, և ի դեպ, դրսևորեց լեզվագիտական անառարկելի կարողություններ, ուսուցման ինչպիսի մեթոդով էր պարապում նրա հետ ուսուցիչը՝ հայագետ-թարգմանիչ Հարություն Ավգերյանը, որն ի դեպ, նրան քնքշանքով որակում էր «իմ խենթը» ձևով, որն էր այն սոցիալ-քաղաքական պատճառը, որը գժտության առիթ հանդիսացավ անգլիական դասականի և Մխիթարյան միաբանության ղեկավարության միջև, որի հետևանքով Բայրոնն ընդհատեց իր պարապմունքները նրանց մոտ և այլն։ Հարկավոր ու անհրաժեշտ լրացումներ, որոնք, եթե չլինեին օտարազգի աղբյուրները, աշխատության մեջ կարող էին և չլինել։

Այսպիսի բազմակողմանի քննությունը պետք է հանգեցներ աշխատության «Ներշնչանքներ ձիթենիների տակ» գլխի գրության գաղափարին, որը գրախոսվող աշխատության հաջողված բաժիններից մեկն է։ Դաշտենցն այստեղ բազմաթիվ համոզիչ փաստերով ապացուցում է, որ Բայրոնի համաշխարհային անուն ու հռչակ վայելող գործերից մի քանիսը գրվել են Մխիթարյան մենաստանում և նրանց որոշակի ազդեցության ներքո. մի բան, որի մասին մինչև վերջերս գերադասում էին կամ լռել, կամ, որ ավելի առօրյա էր՝ համառորեն ժխտել։ Այստեղ է գրվել նշանավոր «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմի չորրորդ երգը, որն ի դեպ, կտրուկ վերընթացով տարբերվում է նախորդ երեք երգերից, այստեղ է գրվել «Վեպպոն», որի մասին դրվատանքով էր արտահայտվում Պլեխանովը, այստեղ է գրվել «Վենետիկյան օդա» հռչակավոր ստեղծագործությունը, մի գործ, որն այնքան շատ է թարգմանությունների ու վերահրատարակումների արժանացել, որ այսօր արդեն անհնար է նրանց գոնե մոտավոր թիվը որոշելը։ Մխիթարյանների մոտ՝ անդորրավետ ու խաղաղ Ս.Ղազար կղզում, հեռու աշխարհիկ աղմուկներից, Բայրոնը սկսում ու ավարտում է իր «Դոն Ժուանի» առաջին և երկրորդ երգերը, այսպիսով հիմքը դնելով մի ստեղծագործության, որը աշխարհիս լավագույն գործերի շարքն է դասվում և այլն։

Այս կապակցությամբ՝ մի օգնություն աշխատության հեղինակին։ Խոսելով «Մանֆրեդի» գլխավոր հերոսներից մեկի՝ քահանայի մասին, Դաշտենցը զգուշորեն ավելացնում է. ««Մանֆրեդի»... քահանայի պատկերը կերտելիս, Բայրոնը **իբրև թե** (ընդգծումը մերն է. Ս.Շ.) նկատի է ունեցել հայ վանական Սուքիաս Սոմալյանին» (էջ 78)։ Նախ, առնվազն լուրջ չէ Վենետիկի Մխիթարյան միաբանության ականավոր անդամ, ապա և, այդ միաբանության աբբահայր, գրականագետ, հայ դասականների բնագրերի քննական հրատարակիչ,

բառարանագիր, թարգմանիչ (անգլերենից-հայերեն) Սուքիաս Սոմալյանին «հայ վանական» անհաջող արտահայտությամբ ներկայացնելը, ապա, հեղինակի ուշադրությունն ենք հրավիրում «Պայրընն և Վենետիկի հայոց վանքը» («Ծաղիկ», № 5, էջ 168-170) և «Հայկականք» («Բազմավեպ», 1908, № 4) հոդվածների վրա, որտեղ ոչ միայն փաստ առ փաստ ապացուցվում է վերոհիշյալ տեսակետի ճիշտ լինելը, այլև ցույց է տրվում, որ իր «Կայենը» գրելու ժամանակ էլ Բայրոնը որոշակիորեն եղել է միաբանության որոշ անդամների կերպարային ազդեցության ներքո։ Մի բան, որի մասին Դաշտենցը, դժբախտաբար, բավարարվում է միայն մեկ հատիկ նախադասություն ասելով (էջ 79)։

Եվ վերջապես, «Բայրոնը և հայերը» աշխատության մյուս կարևոր արժանիքներից մեկը պետք է համարել այն հանգամանքը, որ հեղինակն իր հնարավորության սահմաններում ուրվագծել է Բայրոնից կրած գրական այն բոլոր ազդեցությունները, որոնց, ավել կամ պակաս չափով, ենթարկվել են հայ հեղինակները։ Չէինք ասի, որ աշխատության այդ մասը գրված է շատ հաջող, որ Դաշտենցը կարողացել է մինչև վերջ և կատարյալ իմաստով բացահայտել վերոհիշյալ և, ի դեպ, ամենևին էլ ոչ հեշտ պրոբլեմը, սակայն, այն ամենն ինչ ասվում է այս կապակցությամբ (էջ 131-154), ընթերցողին գաղափար է տալիս այն խոշոր ու բարերար ազդեցության մասին, որ անվերապահորեն կրել են հայ բանաստեղծները անգլիական հանճարի ստեղծագործություններից։ Մի ուշագրավ հարց, որի ավելի մանրամասն մեկնաբանությանը ծանոթանալու համար, ուշագրավ է նաև «Բայրոնը Ս.Ղազարի կղզում» (տես «Մշակ», 1901, №190) հոդվածը։

Մի քանի խոսք «Բայրոնը և հայերը» ուսումնասիրության թերությունների մասին։

Անհաջող է շարադրված և փաստական տեսակետից թերի է աշխատության «Բայրոնը և Ալիշանը» գլուխը։ Ընդհանրապես, ճիշտ գնահատելով Ալիշանին, Դաշտենցը սակայն, շրջանցել է բուն նյութին վերաբերվող մի քանի կարևոր փաստեր։ Հայտնի է, որ իր երկարատև կյանքի ընթացքում, Ալիշանը մի շարք անգամներ վերադարձել է Բայրոնին, կատարելով նրանից զանազան թարգմանություններ, որոնք անկանոն պարբերականությամբ հրատարակել է իրենց պարբերականի՝ «Բազմավեպի» էջերում։ Հարկավոր էր նախ՝ հանգամանորեն քննել այս հարցը, և այդ հենքի վրա խոսել «Բազմավեպի» վարած թարգմանական քաղաքականության մասին առհասարակ և Բայրոնի կապակցությամբ, մասնավորապես։ Մի բան, որ դժբախտաբար, չի արված։

Ապա, 1852 թվականին, Վենետիկում Ալիշանը հրատարակում է իր կազմած «Ծաղկաքաղ քերդողաց անգղիացվոց» ժողովածուն (վերահրատարակված է 1887 և 1907 թթ.), որտեղ նա մի շարք հաջող գրաբար թարգմանություններ է զետեղել Միլտոնից, Պոպպից, Գրեյից, ինչպես նաև, որ մեզ համար կարևոր է, Բայրոնից։ Անգլերեն բնագրերի հետ համատեղ, զետեղված են Բայրոնի «Կոտորած բանակին Սենեքերիմա», «ՈՒղերձ առ Ովկիանոս», «Ի Վատերլու», «Առ ժամանակ» և մի քանի այլ բանաստեղծությունների գրաբար թարգմանությունները, ինչպես նաև «Բազմավեպում» տպագրված թարգմանություններից մի քանիսը։ Հարկավոր էր հանգամանորեն քննել այդ ժողովածուում եղած թարգմանությունները, պարզել, թե ինչու Բայրոնի՝ հատկապես այդ գործերն են արժանացել Ալիշանի ուշագրությանը, ինչու «Բազմավեպում» հրատարակած իր բոլոր թարգմանությունները չէ, որ Ալիշանը զետեղել է ժողովածուում, հարկավոր էր հանգամանորեն քննել ամբողջ «Ծաղկաքաղ քերդողաց անգղիացվոց» ժողովածուն, որտեղ մի քանի ուրիշ նյութեր կան Բայրոնի հետ առնչվող (նամակներ, հայերենից անգլերեն կատարած հայ դասականների գործերի հատվածների թարգմանություններ) և այլն։ Սակայն այս ուշագրավ ժողովածուի մասին Դաշտենցը, դժբախտաբար, ոչ մի խոսք չի ասում, իսկ դա, անպայմանորեն անհրաժեշտ էր։

Ապա, 1860 թվականին Վենետիկում հրատարակվում է Բայրոնի «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմի չորրորդ երգի՝ Ալիշանի թարգմանությունը, «Իտալիա» խորագրով, որը հետագայում էլի երեք վերահրատարակություն ունեցավ (1880, 1889 և 1891)։ Գրախոսները թարգմանությանն այնպիսի դրական գնահատականներ տվեցին, որը բացառիկ էր նույնիսկ մեկից ավելի գրախոսականների արժանացած Ալիշանի համար։ «Բայց իբրև գլուխգործոց թարգմանության, – գրում է Արսեն Ղազիկյանը, – Պայրընի «Իտալիան» ունի ան, ուր կուրծք կրծքի կմրցե հեղինակին (այսինքն՝ Բայրոնի. Ս.Շ.) հետ»։ Անհրաժեշտ էր հանգամանորեն կանգ առնել այս թարգմանության քննության վրա, ցույց տալ, թե ինչպես է այն կատարված, որքանով է թարգմանիչը հարազատ մնացել հեղինակին, ինչն է փոփոխել և ինչպես, և այլն, հարցեր, որոնց ամենալրիվ կերպով ի վիճակի էր պատասխանել Դաշտենցը, և որից մեծապես կշահեր ամբողջ աշխատությունը։ Սակայն այստեղ էլ հեղինակը բավարարվել է մեկ նախադասությամբ միայն արձանագրելով թարգմանության փաստը (էջ 139), խուսափելով անգամ որևէ գնահատական տալուց։

Եվ վերջապես, Ալիշանը թարգմանել է Բայրոնի վերջին բանաստեղծությունը՝ «Այսօր լինիմ ամաց երեսնից և վեցից» վերնագրով, որը հրատարակվել է նրա մահվանից հետո՝ 1920

թվականին (տես «Բազմավեպ», 1920 թ., № 12)։ Այս թարգմանության մասին էլ Դաշտենցը ոչինչ չի ասում, այնինչ այդ անելն անհրաժեշտ էր։ Ի դեպ, Բայրոնի վերոհիշյալ բանաստեղծությունն իր հայրենասիրական-մարտական բնույթի պատճառով ջերմորեն սիրվել է հայ հանրության կողմից, և արժանացել է բազմաթիվ թարգմանությունների ու հրատարակությունների։ Ամեն անգամ նոր թարգմանությամբ, հիշյալ գործն իրենց էջերում զետեղել են «Ազգասերը» (1847 թ., հ. Դ, էջ 152), «Մասյաց աղավնին» (1860 թ. դեկտեմբեր), «Մուրճը» (1905 թ. մայիս, էջ 65-66) և այլն։ Հիշյալ հանգամանքն առանձնապես հետաքրքրական է դառնում այն պատճառով, որ բանաստեղծության թարգմանությունը իրենց էջերում զետեղել են գաղափարապես, ուղղությամբ ու սկզբունքներով իրար կատարյալ հակադիր պարբերականները. բավական է նկատի ունենալ թեկուզ վերևներում հիշատակվածները։ Անհրաժեշտ էր հանգամանորեն խոսել Բայրոնի հիշյալ բանաստեղծության հետ առնչվող այս հարցերի մասին, որը սակայն, աշխատության մեջ դարձյալ չի արված։

Ցանկալի կլիներ, վերջապես, որ Դաշտենցը իր «Բայրոնը և հայերը» գրքույկի վերջում զետեղեր հայ գրողների ու բանասերների՝ անգլիական դասականի մասին գրած ուսումնասիրությունների ու նշանավոր հոդվածների թեկուզ և համառոտ բիբլիոգրաֆիան։ Մի բան, որը զգալի չափով կօգներ ընթերցողներին՝ նրա վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ քաղելու գործում։

Սովետական գրականություն, 1960, № 2, փետրվար